

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՑԻԱ

ՀՈՂՎԱԾ 1

Բարձր պայմանավորվող կողմերը իրենց իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր մարդու համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի 1 բաժնում:

ԲԱԺԻՆ I

Իրավունքներ եւ ազատություններ

ՀՈՂՎԱԾ 2

Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող կանխամտածված կերպով զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատար ածելով մահավճիռը, որ կայացնում է դատարանը՝ կատարված հանցագործության համար, որի վերաբերյալ օրենքով նման պատիժ է նախատեսված:

Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն ուժի գարծաղրման հետեւանք է, որը միանգամայն անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանվելու համար.

բ) օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմունքներով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար.

գ) խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

ՀՈՂՎԱԾ 3

Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի:

ՀՈՂՎԱԾ 4

Ստրկության եւ հարկադիր աշխատանքի արգելում

Ոչ ոք չպետք է ստրկության մեջ կամ անազատ վիճակում պահվի:

Ոչ ոք չպետք է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մեջ ներգրավվի:

Սույն հոդվածի նպատակների համար Ֆհարկադիր կամ պարտադիր աշխատանք՝ եզրույթը չի ներառում^ա

ա) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պետք է կատարի սույն կոնվեցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվող կամ նման կալանքից պայմանականորեն ազատված անձը.

բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որոնցում օրինական է ճանաչվում զինվորական ծառայություններից հրաժարվելը համոզմունքներից ելնելով^ա պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը.

գ) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում.

դ) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որոնք մտնում են սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

ՀՈԴՎԱԾ 5

Ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք

ուրաքանչյուր մարդ ազատության եւ անձի անձեռնմխելիության իրավունք ունի: Ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետեւյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով:

ա) անձին օրինական կալանքի տակ պահելը^ա իրավասու դատարանի կողմից նրան մեղավոր ճանաչելու հիման վրա.

բ) անձին օրինական կալանավորումը կամ ձերբակալումը դատարանի օրինական վճիռը չկատարելու համար կամ օրենքով կարգադրված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով.

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը այն նկատառումով, որ նա կանգնի իրավասու դատական մարմնի առջեւ^ա հիմնավոր կերպով կասկածվելով իրավազանցություն կատարելու մեջ, կամ այն դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ անհրաժեշտ է կանխել նրա կողմից իրավազանցության կատարելը կամ այն կատարելուց հետո նրան խանգարել թաքնվելու.

դ) անչափահաս անձի ձերբակալումը օրինական որոշման հիման վրա^ա դատախարակչական հսկողության համար, կամ նրա օրինական ձերբակալումը, որպեսզի նա կանգնի իրավասու մարմնի առջեւ.

ե) անձանց օրինական ձերբակալումը^ա վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաեւ հոգեկան հիվանդների, գինեմոլների, թմրամոլների կամ թափառաշրջիկների օրինական կալանումը.

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը^ա նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում^ա նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

Յուրաքանչյուր ձերբակալվածի իրեն հասկանալի լեզվով անհապաղ հաղորդվում են կալանավորման պատճառները եւ նրան ներկայացվող ցանկացած մեղադրանքը:

Յուրաքանչյուր ձերբակալված անձ սույն հոդվածի 1(զ) կետի դրույթներին համապատասխան անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական գործառույթներ իրականացնել, եւ իրավունք ունի դատաքննության ենթարկվել խելամիտ ժամկետի ընթացքում կամ ազատվել մինչեւ դատը երաշխիք տրամադրելուց:

Յուրաքանչյուր ոք, ով գրկված է ազատությունից^ա կալանավորվելու կամ կալանքի տակ պահվելու հետեւանքով, իրավունք ունի հետաքննության, որի ընթացքում դատարանը անհետաձգելիորեն լուծում է նրա կալանքի օրինաչափության հարցը եւ որոշում կայացնում նրան ազատելու մասին, եթե ձերբակալությունը անօրինական է:

ՀՈԴՎԱԾ 6

Արդարացի դատաքննության իրավունք

Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության^ա խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից: Դատավճիռը հայտարարվում է հրապարակայնորեն, սակայն մամուլի ներկայացուցիչներին եւ հանրությանը կարող են թույլ չտրվել ներկա լինելու ամբողջ դատաքննությանը կամ նրա մի մասին^ա բարոյականության, հասարակական կարգի կամ ժողովրդական հասարակության մեջ պետական անվտանգության նկատառումներով, եթե դա պահանջվում է անչափահասների շահերի կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանվածության համար, կամ այնքանով դա, դատարանի կարծիքով, խիստ անհրաժեշտ է առանձնահատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտեր արդարատաղության շահերը:

Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչեւ որ նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան:

Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի առնվազն հետեւյալ իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն ծանուցվելու ներկայացված մեղադրանքի բնույթի եւ հիմքի մասին.

բ) բավականաչափ ժամանակ ու հնարավորություններ^ա իր պաշտպանությունը նախապատրաստելու համար.

գ) պաշտպանել իրեն անձամբ կամ իր կողմից ընտրված դատապաշտպանի միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալ անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը.

դ) հարցաքննել իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննության ենթարկվեն, եւ իրավունք ունենալ կանչելու ու հարցաքննելու իր վկաներին նույն այն պայմաններով, ինչ իր դեմ ցուցում տված վկաները.

ե) օգտվելու թարգմանչի անվճար ծառայությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

ՀՈՂՎԱԾ 7

Պատիժ^ա բացառապես օրենքի հիման վրա

Ոչ ոք չի կարող ճանաչվել որեւէ քրեական հանցագործություն կատարելու մեջ որեւէ գործողության կամ անգործության հետեւանքով, որը դրա կատարման պահին գործող ներքին կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չէր հանդիսանում: Հավասարապես չի կարող ավելի ծանր պատիժ նշանակվել, քան այն, որ ենթակա էր կիրառման քրեական հանցագործության կատարման պահին:

Սույն հոդվածը չի խոչնդոտում ցանկացած անձի դատի տալ կամ պատժել^ա ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարելու պահին հանցագործություն էր^ա քաղաքակիրթ երկրների կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 8

Անձնական կամ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը, ապահովվեն իր բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության գաղտնիությունը:

Չի թույլատրվում պետական մարմինների միջամտություն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ^ա ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, կարգուկանոնի պահպանման եւ հանցագործությունների կանխման համար, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության

պահպանման կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատասիրությունների պաշտպանության նպատակով:

ՀՈՂՎԱԾ 9

Մտքի, խղճի եւ կրոնի ազատություն

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի, մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքները^a փոխելու ազատությունը, եւ իր կրոնը եւ համոզմունքները ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակային կամ մասնավոր կարգով, ժամերգությամբ, ուսմունքով դավանելու եւ կրոնական ու ծիսական արարողություններ կատարելու ազատությունը:

Իր կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ^a ի շահ հասարակական անդորրի, հասարակական կարգի, առողջության ու բարոյական պահպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար:

ՀՈՂՎԱԾ 10

Կարծիք արտահայտելու ազատություն

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի, ազատորեն արտահայտել իր կարծիքը: Այդ իրավունքը ներառում է իր կարծիքին մնալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը^a առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ պետական սահմաններից: Այս հոդվածը պետություններին չի խոչնդոտում ռադիոհաղորդումների, հեռուստատեսային եւ կինոմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում մտցնել:

Այդ ազատությունների իրականացումը, որը պարտավորություններ եւ պատասխանատվություն է դնում, կարող է կապված լինել ձեւականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանման պատժահրահանգների հետ, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ^a ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց վարկը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական բնույթի տեղեկության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 11

Ժողովների եւ միավորումների ազատություն

Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի խաղաղ ժողովների ազատության եւ ուրիշների հետ միավորվելու ազատության, ներառյալ արհմիություններ ստեղծելու եւ իր շահերի պաշտպանության համար դրանց մեջ մտնելու իրավունքը:

Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ ոչ մի տեսակի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ^a ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչնդոտում օրինական սահմանափակումներ մտցնել զինված ուժերի, ոստիկանության եւ պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման վրա:

ՀՈՒՎԱԾ 12

Ամուսնանալու իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ եւ կանայք իրավունք ունեն ամուսնանալու եւ ընտանիք ստեղծելու ներքին օրենսդրությանը համապատասխան, որը կարգավորում է այդ իրավունքի իրականացումը:

ՀՈՒՎԱԾ 13

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք

Յուրաքանչյուր մարդ, ում իրավունքներն ու ազատությունները, որոնք շարադրված են սույն կոնվենցիայում, խախտված են, պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, նույնիսկ եթե նման խախտումը կատարվել է պաշտոնե գործող անձանց կողմից:

ՀՈՒՎԱԾ 14

Խտրականության արգելում

Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից եւ ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության^a անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնության պատկանելիությունից, կարողությունից, գույքային վիճակից, ծնունդից կամ այլ հանգամանքից:

ՀՈՒՎԱԾ 15

Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում

Պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, ամեն մի Բարձր պայմանավորվող կողմ կարող է միջոցներ ձեռնարկել^a

սույն կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լարվածությունը, պայմանով, որ նման միջոցները անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

Այս դրույթը չի կարող հիմք հանդիսանալ հոդված 2-ից շեղվելու համար, բացառությամբ օրինական պատերազմական գործողությունների հետեւանքով մարդկային զոհերը, կամ 3 (1), 4 եւ 7 հոդվածների դրույթներից:

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղման այդ իրավունքը, Եվրախորհրդի Գլխավոր քարտուղարին լիովին իրազեկ է պահում նման միջոցների գործողությունը դադարեցնելու եւ կոնվենցիայի դրույթների լրիվ իրագործումը վերսկսելու մասին:

ՀՈՂՎԱԾ 16

Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

10, 11 եւ 14 հոդվածներում ոչինչ չի կարող Բարձր պայմանավորվող կողմերի համար խոչընդոտ համարվել՝ օտարերկրացիների քաղաքական գործունեության վրա սահմանափակումներ մտցնելու համար:

ՀՈՂՎԱԾ 17

Իրավունքների չարաշահման արգելում

Սույն կոնվենցիայում ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որեւէ պետություն, անձանց խումբ կամ որեւէ անձ իրավունք ունի զբաղվելու որեւէ գործնությամբ կամ կատարելու որեւէ գործողություններ՝ ուղղված Սույն կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքների եւ ազատությունների ոչնչացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան դա նախատեսված է կոնվենցիայով:

ՀՈՂՎԱԾ 18

Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

Նշված իրավունքների եւ ազատությունների առնչությամբ սույն կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում ուրեւէ այլ նպատակների համար, բացի այն դեպքերի, որոնց համար դրանք նախատեսված են:

ԲԱԺԻՆ II

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՀՈՂՎԱԾ 19

Դատարանի հիմնում

Սույն կոնվենցիայով եւ նրան կից արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտականությունների կատարումն ապահովելու համար կազմվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան, այսուհետու՝^a §Դատարան: Այն գործում է մշտական հիմունքներով:

ՀՈՒՎԱԾ 20

Դատավորների թիվը

Դատավորների կազմի մեջ մտնող դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

ՀՈՒՎԱԾ 21

Դատավորներին ներկայացվող պահանջները

Դատավորները պետք է օժտված լինեն բարոյական բարձր հատկանիշներով եւ բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն հանրաճանաչ հեղինակություն վայելող իրավագետներ:

Դատավորները դատարանի աշխատանքին մասնակցում են անհատական կարգավիճակով:

Պաշտոնում գտնվելու ամբողջ ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն ոչ մի այնպիսի գործնեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաչառության կամ այն պահանջների հետ, որոնք բխում են նրանց լիազորությունների մշտական բնույթից. սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

ՀՈՒՎԱԾ 22

Դատավորների ընտրություն

Խորհրդարանական վեհաժողովը յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմից դատավոր է ընտրում վերջինիս օգտին տված քվեների մեծամասնությամբ այն ցուցակից, որը ներառում է Բարձր պայմանավորվող կողմերի առաջադրած երեք թեկնածու:

Համանման ընթացակարգ է գործում Բարձր պայմանավորվող նոր կողմերի միանալու դեպքում Դատարանի կազմը համալրելիս, ինչպես նաեւ գոյացած թափուր տեղերը լրացնելիս:

ՀՈՒՎԱԾ 23

Լիազորությունների ժամկետը

Դատավորներն ընտրվում են վեց տարով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն առաջին կազմի դատավորների կեսի լիազորությունների ժամկետն սպառվում է ընտրվելու պահից երեք տարի անց:

Այն դատավորները, որոնց լիազորությունների ժամկետը ավարտվում է առաջին երեք տարին լրանալիս, որոշվում են նրանց ընտրվելուց անմիջապես հետո Եվրախորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից^a վիճակահանությամբ:

Ամեն երեք տարին մեկ, դատարանի կազմը, ըստ հնարավորին, կիսով չափ նորացնելն ապահովելու նպատակով, խորհրդարանական վեհաժողովը կարող է ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելուց առաջ որոշում ընդունել, ու մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների լիազորությունների ժամկետը եւ ժամկետները կլինեն այլ, քան վեց տարի, բայց ամեն դեպքում ոչ ավելի, քան ինը եւ ոչ պակաս, քան երեք տարի:

Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերվում է լիազորությունների ավելի քան մեկ ժամկետի, եւ խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, լիազորությունների ժամկետը որոշվում է Եվրախորհրդի Գլխավոր քարտուղարն ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ:

Այն դատավորը, որն ընտրվել է մի այլ դատավորի փոխարինելու համար, որի լիազորությունների ժամկետը դեռեւս չի ավարտվել, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակաընթացքում:

Դատավորների լիազորությունների ժամկետն սպառվում է նրանց 70 տարին լրանալիս:

Դատավորներն իրենց պաշտոնները զբաղեցնում են ընդհուպ մինչեւ փոխարինվելը: Դրա հետ մեկտեղ, փոխարինելուց հետո, նրանք շարունակվում են քննել արդեն իսկ իրենց տնօրինության ներքո գտնվող գործերը:

ՀՈՂՎԱԾ 24

Պաշտոնից հեռացնելը

Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորի քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլեւ չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

ՀՈՂՎԱԾ 25

Քարտուղարություն եւ ռեֆերենտներ

Դատարանն ունի քարտուղարություն, որի գործառույթներն ու կազմակերպումը սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով: Դատարանն օգտվում է ռեֆերենտների ծառայություններից:

ՀՈՒՎԱԾ 26

Դատարանի լիազումար նիստերը

Լիազումար նիստերում Դատարանը^ա

ա) ընտրում է իր նախագահին եւ նախագահի մեկ կամ երկու տեղակալ երեք տարի ժամկետով, նրանք կարող են վերընտրվել,

բ) ընտրում է ատյաններ, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետով,

գ) ընտրում է Դատարանի-ատյանների նախագահներ, նրանք կարող են վերընտրվել,

դ) ընտրում է Դատարանի ընթացակարգի կանոնները եւ

ե) ընտրում է քարտուղարության ղեկավար եւ նրա մեկ կամ մի քանի տեղակալ:

ՀՈՒՎԱԾ 27

Կոմիտեներ, ատյաններ եւ Մեծ ատյան

Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանի կազմում է կոմիտեներ^ա բաղկացած երեք դատավորից, ատյաններ^ա բաղկացած յոթ դատավորներից, եւ Մեծ ատյան^ա բաղկացած տասնյոթ դատավորներից: Դատարանի ատյաններից որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:

Գործում կողմ հանդիսացող պետությունից ընտրված դատավորները ատյանի եւ Մեծ ատյանի ex-officio անդամ է. նման դատավորի բացակայության դեպքում կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին, տվյալ պետությունը նշանակում է որեւէ անձի, որը հանդես է գալիս որպես դատավոր:

Մեծ ատյանի կազմի մեջ են մտնում նաեւ Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, ատյանների նախագահները եւ Դատարանի այլ անդամներ, որոնք նշանակված են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Այն դեպքերում, երբ գործը 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հանձնվում է Մեծ ատյան, նրա նիստերի չպետք է մասնակցի այն ատյանի դատավորներից ոչ մեկը, որը որոշում է կայացրել, բացառությամբ այդ ատյանի նախագահի եւ գործող կողմ հանդիսացող համապատասխան պետության դատավորի:

ՀՈՒՎԱԾ 28

Կոմիտեների հայտարարությունները գանգատի անընդունելիության մասին

Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել անհատական գանգատը, որը ներկայացվել է 34 հոդվածին համապատասխան, կամ այն հանել

քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

ՀՈՂՎԱԾ 29

Ատյանների որոշումները գանգատի ընդունելիության մասին եւ ըստ գործի էության

Եթե նա չի ընդունել ոչ մի որոշում, որ նախատեսված է 28 հոդվածով, ատյանը որոշում է կայացնում 34 հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելության մասին եւ ըստ գործի էության:

Ատյանը որոշում է կայացնում 33 հոդվածին համապատասխան պետության ներկայացրած գանգատի ընդունելության մասին եւ ըստ գործի էության:

Գանգատի ընդունելության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե Դատարանը բացատրության կարգով հակառակ որոշում չընդունի:

ՀՈՂՎԱԾ 30

Ենթադատության զիջում հոգուտ Մեծ ատյանի

Եթե ատյանի քննության ներքո գտնվող գործը լուրջ հարց է արձաձում, որը վերաբերում է կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը, կամ եթե հարցի լուծումը կարող է հակասել ավելի վաղ Դատարանի կայացրած որոշմանը, ատյանը կարող է մինչեւ իր որոշումը կայացնելը ենթադատությունը չզիջել Մեծ ատյանի օգտին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում դրա դեմ:

ՀՈՂՎԱԾ 31

Մեծ ատյանի լիազորությունները

ա) Մեծ ատյանը 33 հոդվածին համապատասխան որոշումներ է կայացնում, երբ ատյաններից որեւէ մեկը զիջել է ենթադատությունը 30 հոդվածի դրույթների հիման վրա կամ երբ գործը նրան է ուղարկվել 43 հոդվածի դրույթներին համապատասխան.

բ) քննում է խորհրդատվական եզրակացություններ կայացնելու մասին խնդրանքները, որոնք ներկայացվել են 47 հոդվածի դրույթների համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 32

Դատարանի իրավասությունները

Դատարանի տնօրինությանն են ենթակա այն բոլոր հարցերը, որոնք վերաբերվում են կոնվենցիայի եւ նրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, որոնք կարող են նրան հանձնվել 33, 34, եւ 47 հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

Որոշակի գործի առչությամբ Դատարանի իրավասության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

ՀՈՂՎԱԾ 33

Միջպետական գործեր

Բարձր պայմանավորվող ցանկացած կողմ կարող է Դատարան դիմել կոնվենցիայի եւ դրան կից արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել Բարձր պայմանավորվող մեկ այլ կողմ:

ՀՈՂՎԱԾ 34

Անհատական գանգատներ

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած ֆիզիկական անձից, ցանկացած ոչ կառավարական կազմակերպություններից կամ մասնավոր անձանց որեւէ խմբից, որոնք պնդում են, որ սույն կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների խախտման զոհ են հանդիսացել, որ թույլ է տոել Բարձր պայմանավորվող կողմերից մեկը:

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որեւէ կերպ չխոչնդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

ՀՈՂՎԱԾ 35

Ընդունելիության պայմանները

Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներքին միջոցները, եւ գործի վերաբերյալ ազգային մարմինների կողմից վերջնական որոշման կայացման ամսաթվից հաշված վեց ամսվա ընթացքում:

Դատարանը քննության չի ընդունում 34 հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն^a

ա) անանուն է, կամ

բ) ըստ էության, նման է նրան, որն արդեն քննվել է Դատարանի կողմից, կամ արդեն միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի առարկա է եւ եթե գործի վերաբերյալ նոր փաստեր չի բովանդակում:

Դատարանն անընդունելի է համարում 34 հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե այն դիտարկի անհամատեղելի սույն կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների

դրույթների հետ, կամ ակնհայտորեն անհիմն կամ որպես բողոքարկման իրավունքի չարաշահում:

Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի կհամարի սույն հոդվածին համապատասխան: Նա կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

ՀՈՒՎԱԾ 36

Երրորդ կողմի մասնակցությունը

Ատյաններից որեւէ մեկի կամ Մեծ ատյանի քննության ներքո գտնվող ցանկացած գործի առիթով յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի գրավոր դիտողություններ ներկայացնել եւ մասնակցել ունկնդրումներին:

Ի շահ արդար դատավարության, Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը կողմ չէ գործում, կամ ցանկացած շահագրգիռ անձի որը դիմող չէ, հրավիրել գրավոր դիտողություններ ներկայացնելու կամ մասնակցելու ունկնդրումներին:

ՀՈՒՎԱԾ 37

Գանգատը ցուցակից հանելը

Դատարանը կարող է քննության ցանկացած փուլում որոշում ընդունել գանգատը քննության ենթակյան գործերի ցուցակից հանելու վերաբերյալ, եթե հանգամանքները թույլ են տալիս հետետություն անել այն մասին, որ^a

ա) դիմողը մտադիր չէ հասնել իր գանգատի քննության, կամ

բ) վեճն արդեն դադարել է, կամ

գ) Դատարանի պարզած ցանկացած այլ պատճառ գանգատի հետագա քննությունն արդարացված չէ:

Այնուհանդերձ, Դատարանը շարունակում է քննել գանգատը, եթե դա պահանջում է մարդու այն իրավունքների կիրառումը, որոնք երաշխավորված են սույն կոնվենցիայով եւ նրան կից արձանագրություններով:

Դատարանը կարող է որոշում ընդունել գագատը վերականգնելու քննության ենթակա գործերի ցուցակում, եթե գտնի, որ դա արդարացված է հանգամանքներով:

ՀՈՒՎԱԾ 38

Գործի քննությունը շահագրգիռ կողմերի մասնակցությամբ եւ բարեկամական կարգվորման ընթացակարգը

Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, նա՞

ա) շարունակում է գործը քննել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ եւ, եթե անհրաժեշտ է, քննության է իրականացնում, որի արդյունավետ անցկացման համար շահագրգիռ պետություններն ստեղծում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

բ) իրեն դնում է շահագրգիռ կողմերի տրամադրության տակ սույն կենվենցիայով եւ նրան կից արձանագրություններով ճանաչված մարդու իրավունքների պահպանման հիման վրա գործի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

1 կետի (բ) ենթակետի դրույթներով նախատեսված կարգով քննությունը է կրում:

ՀՈՒՎԱԾ 39

Բարեկամական կարգավորման հասնելը

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից որոշում կայացնելու միջոցով, որի մեջ տրվում է փաստերի եւ ձեռք բերված որոշման հակիրճ շարադրանքը:

ՀՈՒՎԱԾ 40

Դոնբաց դատական նիստերը եւ փաստաթղթերից օգտվելը

Եթե բացառիկ հանգամանքների բերումով Դատարանն այլ որոշում չի ընդունի, նրա նիստերը դոնբաց են:

Քարտուղարությունն ի պահ հանձնված փաստաթղթերի մատչելի են, եթե Դատարանի նախագահը այլ որոշում չընդունի:

ՀՈՒՎԱԾ 41

Արդարացի փոխհատուցում

Եթե Դատարանը հայտարարում է, որ կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների խախտում է եղել, իսկ Բարձր պայմանավորվող կողմի ներքին օրենքները միայն մասնակի հատուցման հնարավորություն են ընձեռում, Դատարանը, անհրաժեշտության դեպքում, որոշում է արդարացի փոխհատուցում վճարել տուժած կողմին:

ՀՈՒՎԱԾ 42

Աստիանների որոշումները

Աստիանների որոշումները դառնում են վերջնական՝ 44 հոդվածի 2-րդ կետի դրույթների համապատասխան:

ՀՈՒՎԱԾ 43

Գործը Մեծ աստյան ուղարկելը

Աստյանի կողմից որոշման կայացման ամսաթվից հաշված երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է դիմում ներկայացնել այն ուղարկելու Մեծ աստյանի քննությանը:

Մեծ աստյանի հինգ անդամից բաղկացած կոմիտեն ընդունում է դիմումը, եթե գործը լուրջ հարց է արձաժում, որը վերաբերվում է սույն կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանման կամ կիրառմանը, կամ ընդհանուր բնույթի այլ լուրջ հարցի:

Եթե կոմիտեն ընդունում է դիմումը, ապա Մեծ աստյանն իր որոշումն է կայացնում գործի վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ 44

Վերջնական որոշումներ

1. Մեծ աստյանի որոշումը վերջնական է:
2. Աստյաններից յուրաքանչյուրի որոշումը դառնում է վերջնական, եթե.

ա) կողմերը հայտարարում են, որ չեն դիմի գործն ուղարկելու Մեծ աստյան, կամ

բ) որոշման ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում չի ներկայացվում գործը Մեծ աստյան ուղարկելու դիմումը, կամ

գ) եթե Մեծ աստյանի կոմիտեն 43 հոդվածի դրույթների համաձայն մերժում է գործն ուղարկելու դիմումը:

3. Վերջնական որոշումը ենթակա է հրապարակման:

ՀՈՂՎԱԾ 45

Որոշումների եւ վճիռների հիմնավորումը

Վճիռները, ինչպես նաեւ գանգատների ընդունելիության կամ անընդունելիության մասին որոշումները, պետք է հիմնավորված լինեն:

Եթե վճիռը ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնել իր հատուկ կարծիքը:

ՀՈՂՎԱԾ 46

Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել դատարանի վերջնական վճիռները այն գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են հանդիսանում:

Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որն իրականացնում է դրա կատարման հսկողությունը:

ՀՈՂՎԱԾ 47

Խորհրդատվական եզրակացություններ

Դատարանը կարող է Նախարարների կոմիտեի խնդրանքով խորհրդատվական եզրակացություններ կայացնել կոնվենցիայի եւ նրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը վերաբերող հարցերի առնչությամբ:

Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, որոնք Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող են քննարկել կոնվենցիայով նախատեսված ընթացակարգի համաձայն:

Դատարանի խորհրդատվական եզրակացություն պահանջելու մասին Նախարարների կոմիտեն որոշումն ընդունում է կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների մեծամասնությամբ:

ՀՈՂՎԱԾ 48

Դատարանի իրավասությունները խորհրդատվական եզրակացությունների նկատմամբ

Այն հարցը, թե խորհրդատվական եզրակացություններ անելու Նախարարների կոմիտեի ներկայացրած խնդրանքը վերաբերում է արդյոք Դատարանի իրավասությանը, ինչպես որ դա սահմանված է 47 հոդվածում, որոշում է Դատարանը:

ՀՈՂՎԱԾ 49

Խորհրդատվական եզրակացությունների հիմնավորումը

Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է հիմնավորված լինեն:

Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու իր հատուկ կարծիքը:

Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղղարկվում է Նախարարների կոմիտե:

ՀՈՂՎԱԾ 50

Դատարանի պահպանման ծախսերը

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է Եվրոպայի խորհուրդը:

ՀՈՂՎԱԾ 51

Դատավորների արտոնություններն ու անձեռնմխելությունները

Դատավորներն իրենց գործառույթները կատարելիս օգտվում են արտոնություններից ու անձեռնմխելությունից, որոնք նախատեսված են Եվրոպայի խորհրդի կանոնադրության 40 հոդվածով եւ դրա հիման վրա կնքված համաձայնագրերով:

ԲԱԺԻՆ III

ՀՈՂՎԱԾ 52

Գլխավոր քարտուղարի հարցապնդումները

Հարցապնդում ստանալով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարից, ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ պարզաբանումներ է ներկայացնում այն բանի վերաբերյալ, թե իր ներքին իրավունքը ինչպես է ապահովում սույն կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը:

ՀՈՂՎԱԾ 53

Երաշխիքներ ճանաչված մարդու իրավունքների վերաբերյալ

Սույն կոնվենցիայում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների սահմանափակում կամ նվազեցում, որոնք կարող են ապահովվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ որեւէ այլ համաձայնագրով որին նա մասնակցում է:

ՀՈՂՎԱԾ 54

Նախարարների կոմիտեի լիազորությունները

Սույն կոնվենցիայում ոչ մի բան վնաս չի հասցնում Նախարարների կոմիտեի լիազորություններին, որոնք նրա վրա դրված են Եվրոպայի խորհրդի կանոնադրությամբ:

ՀՈՂՎԱԾ 55

Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են, որ բացի այդ մասին հատուկ համաձայնագիր կնքելու դեպքերից, իրենք չեն օգտվի իրենց միջեւ գործող պայմանագրերից, կոնվենցիաներից կամ հռչակագրերից՝ սույն կոնվենցիայի դրույթների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը, բողոքագիրը

ուղարկելու միջոցով կարգավորման այլ միջոցներից, քան նրանք, որոնք նախատեսված են սույն կոնվենցիայով:

ՀՈՂՎԱԾ 56

Կիրառում տարածքների նկատմամբ

1. Ցանկացած պետություն վավերանալիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցանելու միջոցով հայտարարել այն մասին, որ սույն կոնվենցիան սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատվություն չի կրում:
2. Կոնվենցիայի գործողությունը տարածվում է ծանուցման մեջ նշված տարածքի վրա՝ սկսած Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալուց 30-րդ օրվանից:
3. Սույն կոնվենցիայի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:
4. Ցանկացած պետություն, որը հայտարարություն է արել սույն հոդվածի 1 կետին համապատասխան, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ճանաչում է ֆիզիկական անձանցից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ մասնավոր անձանց խմբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես դա նախատեսված է կոնվենցիայի 34 հոդվածով:

ՀՈՂՎԱԾ 57

Վերապահումներ

1. Ցանկացած պետություն, սույն կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս, կարող է վերապահություն անել կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այս օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի նախատեսում:
2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան տրված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

ՀՈՂՎԱԾ 58

Լուծարում

1. Բարձր պայմանավորվող կողմը կարող է սույն կոնվենցիան չեղյալ հայտարարել միայն կոնվենցիայի մասնակից դառնալուց հաշված հինգ տարին լրանալուց հետո, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից վեց ամիս լրանալուց հետո, որն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում ցանկացած գործողության առնչությամբ սույն կոնվենցիայով ստանձնած իր պարտականություններից, որը կարող էր այդ պարտականությունների խախտում լինել եւ կարող էր նրա կողմից կատարվել մինչեւ լուծարումը ուժի մեջ մտնելու ժամկետը:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինելուց, նույն այդ պայմաններով դադարում է նաեւ սույն կոնվենցիայում կողմ լինելուց:

4. Կոնվենցիան կարող է նախորդ կետերի դրույթների համապատասխան չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը 56 հոդվածի դրույթների համաձայն:

ՀՈՒՎԱԾ 59

Ստորագրում եւ վավերացում

1. Սույն կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրումն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասը վավերագրեր ի պահ հանձնելուց հետո:

3. Այն պետությունների համար, որոնք կոնվենցիան վավերացնելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրա վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի եւ վավերագրերի հանձման մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կնքված է Հռոմում 1950 թվականի նոյեմբերի 4-ին անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստն էլ հավասար ուժ ունեն, մեկ օրինակից, որը պահվում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը վավերացված պատճեններն ուղարկում է կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին: